

Դիտողություններ եւ առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ նաեւ՝ Նախագծերի փաթեթ) վերաբերյալ

1. Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումն առաջին հայացքից չի բխում դրա հիմնավորումից: Ըստ հիմնավորման՝ նախագծերի հիմքում այն պնդում է, որ մի կողմից ատելության խոսքը արտահայտվում է տարբեր դրսևորումներով՝ վիրավորանք (սա մի դրսևորում), ատելության, խտրականության անհանդուրժողականության, թշնամանք հրահրելու քարոզ, բռնության կոչ (մեկ այլ դրսևորում), եւ ինչ-որ միջանկյալ դրսևորում: Բայց այդպես էլ այդ միջանկյալ դրսևորումը ներկայացված/տարանջատված կամ սահմանված չէ, մասնավորապես Նախագծերի փաթեթում

- «ատելության խոսք»-ը կամ կիրառվում է հայեցողության կոնտեքստում, որը ամբողջությամբ տեղավորվում է քաղաքացիաիրավական «վիրավորանք»-ի շրջանակներում, կամ հղում է կիրառվում է խտրականության դրսևորման կոնտեքստում, որն ամբողջությամբ տեղավորվում է Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի շրջանակներում,
- կամ կիրառվում է «ատելության խոսք» ընդհանուր եզրույթը:

Նման պարագայում պարզ չէ, թե Նախագծերի փաթեթի դեպքում ատելության խոսքի միջանկյալ ո՞ր դրսևորման մասին է խոսքը: Առանց ատելության խոսքի՝ չկարգավորված դրսևորումը հստակեցնելու Նախագծերի նման փաթեթն առարկայագուրկ է: Բացի այդ, ատելության խոսքի չկարգավորված դրսևորումը չհստակեցնելը եւ ատելության խոսքի՝ քաղաքացիաիրավական եւ քրեաիրավական պատասխանատվություն նախատեսող դրսևորումներից հստակ չտարանջատելը գործնականում թյուրըմբռումների, տարընթերցումների եւ հակասական մեկնաբանությունների տեղիք կտա եւ, ըստ այդմ, խնդրահարույց է որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

Առաջարկում ենք Նախագծերի փաթեթը խմբագրել, հստակորեն սահմանել, թե ատելության խոսքի որ դրսևորմանն է այն վերաբերում այնպես, որ նշված դրսևորումը հստակորեն տարանջատվի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ կամ Քրեական օրենսգրքի 329-րդ եւ 330-րդ հոդվածների կարգավորումներից:

2. Նախագծերի փաթեթը սահմանում է, որ ատելության խոսքի կամ վարքագծի դեպքում սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկից մինչեւ 2000-ապատիկի չափով հատուցում վճարելու պահանջ կարող է ներկայացնել նաեւ ատելության խոսքից կամ վարքագծից տուժած անձանց խումբը: Սակայն պարզ չէ, թե հատուցման գումարի նշված չափերն ում են վերաբերում՝ խմբի՞ն, թե՞ խմբից յուրաքանչյուրին: Օրինակ, 2000 հոգանոց խմբի դեպքում հատուցման հնարավոր չափը կազմելու՞ է ընդհանուր 2մլն դրամ՝ յուրաքանչյուրին 1000-ական դրամ, թե՞ յուրաքանչյուրին 2մլն-ական՝ ընդհանուր 4մլրդ դրամ:

Առաջարկում ենք հստակեցնել, ինչպես նաև հաշվի առնելով ատելության խոսքի կամ վարքագծի դեպքում վարչաիրավական պատասխանատվությունը՝ առաջարկում ենք նախատեսել երաշխիքներ, որ հատուցումը «ոչ նյութական վնասի նյութական հատուցումից» չփոխակերպվի «պատժի» (օրինակ, նախատեսել, որ խմբին վճարվող ընդհանուր հատուցման չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը):

3. Նախագծերի փաթեթը սահմանում է, որ անձը կամ անձանց խումբը, որոնց նկատմամբ դրսևորվել է ատելության խոսք կամ վարքագիծ, նշված հոդվածով սահմանված կարգով կարող են պահանջել ոչ նյութական վնասի հատուցում՝ անկախ ատելության խոսք հնչեցրած կամ վարքագիծ դրսևորած անձի վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքից: Այդ դրույթն ամբողջությամբ հակասում է Նախագծերի փաթեթի հիմնավորման տրամաբանությանն այնքանով, որքանով հիմնավորմամբ նշված է, թե ատելության խոսքի առնվազն այս դրսևորման համար չկա քրեական պատասխանատվություն (վարչականը նախատվում է նույն փաթեթով):

Միաժամանակ, Նախագծերի փաթեթով նախատեսվող վարչական պատասխանատվությունը որեւէ կերպ հիմնավորված չէ՝ առկա չէ նախագծերի հիմնավորումում: Մասնավորապես, Նախագծերի փաթեթով եւ հիմնավորմամբ ատելության խոսքից տուժող են դիտարկվում առանձին անհատները՝ անհատապես կամ խմբով՝ հնարավորություն ձեռք բերելով ստանալ իրենց կրած ոչ նյութական վնասի նյութական հատուցում: Այնինչ վարչական պատասխանատվության նպատակները տարբերվում են առանձին անհատի կրած ոչ նյութական վնասի նյութական հատուցում ապահովելուց (տես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ եւ 22-րդ հոդվածները):

Նման պայմաններում միեւնույն արարքի դեպքում քաղաքացիական եւ վարչական պատասխանատվությունները միաժամանակ կիրառելու համար անհրաժեշտ է ցույց տալ միաժամանակ երկու տեսակի վնասի առկայությունը՝ «ոչ նյութական վնաս անհատին/անհատների խմբին» եւ «զանցանքի առկայություն, որը ենթակա է տույժի»:

4. Նախագծերի փաթեթով նախատեսվող տուգանքի չափերը եւ տուգանվողներին հնարավոր շրջանակը (ֆիզիկական անձինք եւ լրատվամիջոցներ) հաշվի առնելով՝ նախատեսվող պատասխանատվությունը իր էությամբ ոչ թե վարչական է, այլ քրեական է: Օրինակ, ոչ մեծ եւ միջին ծանրության հանցագործությունների համար որպես հիմնական պատիժ Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տուգանքի ստորին շեմը ողջամտորեն հաճախ ավելի փոքր է լինելու, քան Նախագծերի փաթեթով առաջարկվող վարչական տուգանքն է: Ուստի անհասկանալի է, թե ինչ կոնտեքստում է Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումը համարվում ավելի մեղմ ատելության խոսքի կարգավորում եւ ավելի մեղմ պատասխանատվություն:

Առաջարկում ենք վերանայել Նախագծերի փաթեթով նախատեսվող տուգանքի չափերը կամ, առհասարակ, մինչև քաղաքացիության կարգով իրավունքի պաշտպանության համապատասխան պրակտիկա ձևավորելը ձեռնպահ մնալ վարչական պատասխանատվություն նախատեսելուց:

5. Պարզ չէ, թե որ մարմիններն են իրականացնելու Նախագծերի փաթեթով նախատեսվող վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը, այդ թվում՝ կազմելու վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կամ նշանակելու տույժերը:

Առաջարկում ենք այս մասով լրամշակել Նախագծերի փաթեթը կամ, առհասարակ, մինչև քաղաքացիության կարգով իրավունքի պաշտպանության համապատասխան պրակտիկա ձևավորելը ձեռնպահ մնալ վարչական պատասխանատվություն նախատեսելուց:

6. Նախագծերի փաթեթի հիմնավորման երկրորդ պարբերությունում «արժանապատվության վիրավորանք» բառակապակցությունն առաջարկում ենք փոխել, քանի որ եւ վիրավորանքն առանձին եւ գրպարտություն առանձին անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու դրսևորումներ են: Հետեւաբար, ներպետական վերաբերելի օրենսդրության բառակազմի տեսանկյունից ճիշտ չի դիպվածային կիրառել միայն «արժանապատվության վիրավորանք» արտահայտությունը, ճիշտ այնպես, ինչպես ճիշտ չի լինի առանձին կիրառել «պատվի վիրավորանք», «արժանապատվության գրպարտություն» կամ «պատվի գրպարտություն», արտահայտությունները քանի որ «վիրավորանք» եզրույթն արդեն իսկ ներառում է ի թիվս այլնի արժանապատվության արատավորումը:

7. Նախագծերի փաթեթի հիմնավորման երրորդ պարբերության այն պնդումը, թե «Վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի զարգացումը զգալիորեն փոխել է հասարակական հաղորդակցման ձևերը: ՁԼՄ-ները և սոցիալական հարթակները դարձել են հիմնական հարթակները, որտեղ ձևավորվում և տարածվում է հանրային կարծիքը:» ճիշտ չէ այնքանով, որքանով համացանցն ընդհանրապես եւ սոցիալական հարթակները մասնավորապես բավական վաղուց են դարձել հաղորդակցման տարածված գործիքներ, եւ, ըստ այդմ, նման հարթակներում արտահայտված խոսքը/կարծիքը առնվազն 15 տարի է, ինչ մարդու պատվի եւ արժանապատվության արատավորման՝ վիրավորանքի եւ գրպարտության կոնտեքստում մեկնաբանվել եւ կարգավորվել են համապարփակորեն՝ ներառյալ դատական վերաբերելի նախադեպը (տես՝ Վիրավորանք եւ գրպարտություն. Ձեռնարկ 2014 եւ [Վիրավորանք եւ գրպարտություն.](#)

իրավական պաշտպանության ուղեցույց 2025): *Հիմնավորման նշված մասն առաջարկում ենք հանել, կամ վերաշարադրել:*

8. Նախագծերի փաթեթի հիմնավորման չորրորդ պարբերության այն պնդումը, թե «Ներպետական օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է միայն քրեական պատասխանատվություն:» ճիշտ չէ եւ հակասում է հենց հիմնավորման մեջ ներկայացված այն փաստարկին, որ ատելության խոսքը կարող է դրսևորվել ի թիվս այլնի նաեւ վիրավորանքով: Հետեւաբար, ատելության խոսքի համար ներպետական գործող օրենսդրությամբ նախատեսված է ինչպես քրեաիրավական, այնպես էլ քաղաքացիաիրավական պատասխանատվություն: *Հիմնավորման նշված մասն առաջարկում ենք հանել, կամ վերաշարադրել:*

9. Նախագծերի փաթեթի հիմնավորման հինգերորդ պարբերության այն պնդումը, թե «ՀՀ գործող օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված չեն քաղաքացիաիրավական եւ վարչաիրավական պատասխանատվության միջոցներ:» ճիշտ չէ, քանի որ ատելության խոսքի համար նախատեսված է քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց առնվազն այնքանով, որքանով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանված է ոչ նյութական վնասի նյութական հատուցումը ատելության խոսքի այնպիսի դրսևորման համար, ինչպիսին, ըստ Նախագծերի փաթեթի հիմնավորման, վիրավորանքն է:

Ավելին, նշված մասով հարուստ դատական նախադեպ ձեւավորված է նաեւ Հայաստանում, այդ թվում այնպիսի նախադեպ, որը համադրելի է Նախագծերի փաթեթի հիմնավորման մեջ վկայակոչված ՄԻԵԴ նախադեպային իրավունքին: Օրինակ, Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանը թիվ ԵԿԴ/2491/02/11 գործով կայացրած որոշմամբ լրատվամիջոցի կողմից այոց մեկնաբանությունները հանելու պահանջի նկատմամբ կիրառել է այն նույն սկզբունքը, ինչ ՄԻԵԴ-ը Նախագծերի փաթեթի հիմնավորման մեջ վկայակոչված Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով:

Առաջարկում ենք ատելության խոսքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ նախատեսված չլինելու վերաբերյալ պնդումը հանել, կամ խմբագրել հիմնավորումը եւ Նախագծերի փաթեթն այնպես, որ դրանք չվերաբերեն ատելության խոսքի այնպիսի դրսևորմանը, ինչպիսին վիրավորանքն է (տես նաեւ 1-ին դիտողությունը)՝ բացառելով Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորման եւ

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կարգավորման միջև հնարավոր տարբերությունները:

10. Խնդրահարույց է նախագծի այն պնդումը, թե «Կարծում ենք, որ նշված զանգվածային լրատվամիջոցների համար ոչ միայն իրենց կողմից ատելության խոսք չտարածելը, այլ նաև իրենց հարթակի օգտատերերի կողմից հրապարակած՝ ատելության խոսք պարունակող հրապարակումների հեռացման պարտականության սահմանումը կարող է արդյունավետ առաջին քայլ լինել՝ այս ոլորտը օրենսդրական կարգավորման ենթարկելու տեսնակյունից: Միաժամանակ, հաշվի առնելով, որ անձինք հիմնականում մեկնաբանություններ են տեղադրում ոչ թե լրատվական կայքերում, այլ սոցիալական ցանցերում տվյալ լրատվամիջոցների էջերում և ալիքներում՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ամրագրել նաև նշված հարթակներում նման մեկնաբանությունների հեռացման պարտականությունը»: Նշված պնդումը ունի հետևյալ խնդիրները.

- Սոցիալական հարթակներում լրատվամիջոցների էջերում այլոց մեկնաբանությունների հարցը եւ դրանց հեռացման՝ լրատվամիջոցների պարտականության սահմանները բավական հստակորեն կարգավորված են, այդ թվում՝ ինչպես հիմնավորման մեջ վկայակոչված ՄԻԵԴ պրակտիկայով, այնպես էլ ներպետական դատական պրակտիկայով (տես՝ 9-րդ դիտողությունը): Նախագծերի փաթեթում գործող կարգավորումները հաշվի առնված չեն:
- Լրատվամիջոցների նման «պարտականություն» նախատեսելու առաջին քայլը սկզբունքորեն պետք է լինի լրատվամիջոցների ինքնակարգավորումը, այլ ոչ թե օրենքով նման ուղղակի պարտականություն սահմանելը: Հակառակ պարագայում նման միջամտությունը խնդրահարույց է համաչափության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից: Պետք է նշել, որ վերաբերելի օրենսդրական նախաձեռնություններ կան, որոնք ուղղված են լրատվամիջոցներում որակյալ եւ մարդու իրավունքներին համահունչ բովանդակության ապահովմանը, այդ թվում՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ լրատվամիջոցների ինքնակարգավորման ինստիտուտի ներդրման մասին: Այս համատեքստում ընդունելի չէ, որ նման միջամտող իրավակարգավորում ընդունվի նախագիծը մշակողների կարծիքի հիման վրա. «կարծում ենք»-ն այս կոնտեքստում պատշաճ հիմնավորում չէ, անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչու այլ նախաձեռնությունները, այդ թվում՝ լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմի նախատեսվող օրենսդրական ճանաչումը բավարար չեն լինելու:
- Նախագծերի փաթեթի հիմնավորման այս կոնտեքստում խնդրահարույց է «լրատվամիջոցի հարթակ» դիտարկել եւ լրատվամիջոցի կայքը, եւ լրատվամիջոցի՝ այլ հարթակում ունեցած օգտահաշիվը/էջը: Լրատվամիջոցը կարող է եւ գործնականում ունի իր սեփական կայքում եւ այլ սոցիալական հարթակներում իր օգտահաշվի բովանդակությունը տնօրինելու տարբեր սահմաններ ու հնարավորություններ, եւ ամեն հարթակ չէ, որ հավասարապես կառավարելի է լրատվամիջոցի համար (օրինակ՝ X, Bluesky, Mastadon եւ այլն):

Թեև համարում ենք, որ ատելության խոսքի դեմ պայքարում անհրաժեշտ են ի թիվս այլնի կատարելագործել նաև օրենսդրական կարգավորումները/գործիքները, սակայն գտնում ենք, որ նման օրենսդրական նախաձեռնության դեպքում պետք է բացառվեն նաև լրատվամիջոցների գործունեությանն անհամաչափ միջամտության, եւ լրագրողական ազատության նկատմամբ նման նախագծերի «սառեցնող» ազդեցության (chilling effect) ռիսկերը: Ուստի առաջարկում ենք հաշվի առնել այս դիտողության շրջանակում նշված վերոնշյալ երեք խնդիրները, այդ թվում՝ լրատվամիջոցների մասով որպես առաջին քայլ դիտարկել ատելության խոսքի դեմ պայքարը լրատվամիջոցների ինքնակարգավորման: